


Գիտություն

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

Հրատարակվում է 1993 թ. փետրվարից



ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում նշվեց Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի հիմնադրման 75-ամյակը

Ս.թ. սեպտեմբերի 22-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում նշվեց ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի հիմնադրման 75-ամյակը: Միջոցառման ժամանակ ելույթ ունեցան ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը, ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը, ՀՀ ԳԱԱ նախագահի գլխավոր խորհրդական, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանը շնորհավորեց Բյուրականի աստղադիտարանի ողջ անձնակազմին, մաղթեց հետագա նվաճումներ, բարձր գիտական արդյունավետություն, նորանոր հայտնագործություններ, նոր տաղանդավոր երիտասարդ կադրերի ներհոսք՝ ի նպաստ Հայաստանի գիտական ներուժի զարգացման և միջազգային հեղինակության ուղղված հետագա քայլերի:

«Բյուրականի աստղադիտարանը տասնամյակներ շարունակ մեր գիտության առաջամարտիկն է: Հիմնադրման հենց առաջին տարիներից աստղադիտարանում կատարվել են կարևորագույն հայտնագործություններ, առաջ են քաշվել հիմնարար վարկածներ և տեսություններ, իրականացվել են տիեզերական մարմինների զանազան հետազոտություններ: Առավել հայտնի են Վիկտոր Համբարձումյանի կողմից աստղասփյուռների հայտնաբերումը, գալակտիկաների միջուկների ակտիվության վարկածը, տիեզերական զերիսիտ նյութի տեսությունը, բռնկվող աստղերի վիճակագրությունը, Բենիամին Մարգարյանի շրջահայությունը, ինչպես նաև Գրիգոր Գուրզադյանի կողմից խորհրդային տիեզերական աստղագիտության մեջ կատարած առաջին քայլերը: Բյուրականի աստղադիտարանը միշտ ակտիվ է եղել իր միջազգային կապերով և տարիների ըն-



թացքում միջազգային բարձր հեղինակություն է ձեռք բերել: Իրավամբ, Բյուրականի աստղադիտարանը կարելի է անվանել Հայաստանի այցեքարտերից մեկը: Ներկայումս Բյուրականի աստղադիտարանը ՀՀ կառավարության կողմից ճանաչված է որպես Ազգային արժեք, Միջազգային աստղագիտական միության կողմից ճանաչված է որպես Տարածաշրջանային աստղագիտական կենտրոն: Այստեղ է գտնվում աստղագիտական սպեկտրների աշխարհի ամենամեծ հավաքածուն՝ 20 միլիոն սպեկտր, որի թվային տարբերակն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի փաստագրական արժեքների ցանկում: Դրա հիման վրա ստեղծվել է Հայկական վիրտուալ աստղադիտարանը, որը Վիրտուալ աստղադիտարանների միջազգային ալյանսի անդամ է»,- ասաց Աշոտ Սաղյանը:

ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը իր շնորհավորական խոսքում ասաց, որ Բյուրականի աստղադիտարանը եղել է մեր գիտության շարժման հիմնական լույսնորոշիչներից մեկը՝ նշելով, որ իր գիտական կյանքի մի մասը սերտորեն կապված է ԵՊՀ-ի տեսական ֆիզիկայի ամբիոնի հետ, որը զավակն է Բյուրականի աստղադիտարանի: Արմեն Սարգսյանը

նաև հղել է իր պաշտոնական ուղերձը, որում մասնավորապես ասված է. «Բյուրականի աստղադիտարանի հոբելյանը ևս մեկ առիթ է խոսելու այն մասին, որ գիտության հանդեպ վերաբերմունքը լուրջ փոփոխությունների կարիք ունի... Աշխարհն այսօր ոչ թե առաջ է շարժվում, այլ՝ խելահեղ արագությամբ սլանում է առաջ: Եթե մենք որպես պետություն, որպես հասարակություն, որպես ժողովուրդ, որպես գիտական համայնք չզգանք այդ արագությունը, հետագայում անհնար կլինի հետ բերել կորցրած ժամանակը...»

75 տարի առաջ, երբ հիմնադրվում էր Բյուրականի աստղադիտարանը, ներկայիս տեխնոլոգիաները ֆանտաստիկա էին: Այսօր ֆանտաստիկան վաղուց իջել է երկիր և գիտությանը պարտադրում է հաշվի մատել իրականության հետ, իսկ երազողներին՝ մտածել ֆանտաստիկայի արդեն գալիք դրսևորումների մասին: Եթե ժամանակին աստղերին հետևում էր առավելապես մարդկային բանականությունը, այսօր արհեստական բանականությունն անցել է նաև աստղագիտության ոլորտ: Աստղային երկնքին հետևում են նորագույն տեխնոլոգիաները: Սակայն երբեք չմոռանանք, որ նրանք բոլորը

մարդկային մտքի ու բանականության ծնունդ են, չմոռանանք, որ լավագույն տեխնոլոգիաներն առաջին հերթին միտքն ու տաղանդն են»:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը նշեց, որ Բյուրականի աստղադիտարանի աշխատողների ներդրումը գիտության ասպարեզում ակնհայտ է, և դա ամրագրված է տարբեր գիտական փաստաթղթերում: «Բյուրականի աստղադիտարանի գիտական ուղղությունները հնարավոր են եղել շնորհիվ նրա, որ Վիկտոր Համբարձումյանը՝ որպես հանձարեղ գիտնական, կարողանում էր կանխատեսել գիտության տվյալ ուղղության զարգացումը առաջիկա տարիների համար: Աստղադիտարանի անձնակազմը շարունակում է այն ավանդույթները, որոնք ունեցել է՝ նորովի ներկայացնելով Բյուրականի աստղադիտարանը աշխարհին», - ասաց Ռադիկ Մարտիրոսյանը:

Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանը ներկայացրեց «Բյուրականի աստղադիտարան. տիեզերական նվաճումների 75 տարին» գեկույցը: Նա թվեց Վիկտոր Համբարձումյանի կարևորագույն աշխատանքները Բյուրականում՝ աստղասփյուռների հայտնաբերումը, աստղասփյուռների ընդարձակման երևույթի տեսական կանխատեսումը, անընդհատ առաքման ոչ ջերմային բնույթը, գալակտիկաների միջուկների ակտիվության վարկածը, տիեզերական զերիսիտ նյութի տեսությունը, բարիոնային աստղեր, բռնկվող աստղերի վիճակագրությունը, տվյալ աստղային համակարգում բռնկումների միջին հաճախության բաշխման ֆունկցիան և այլն:

Բյուրականի աստղադիտարանը 75-ամյակի առթիվ շնորհավորական ուղերձներ է ստացել Հայաստանի գիտական հանրության, միջազգային աստղագիտական կառույցների ղեկավարների և գիտնականների կողմից:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահը Մինսկում մասնակցել է Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի նիստին

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատվիրակությունը ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանի գլխավորությամբ սեպտեմբերի 28-ին և 29-ին Մինսկում մասնակցել է «Անկախ պետությունների համագործակցության 30 տարին, արդյունքներ, հեռանկարներ» միջազգային գիտագործնական համաժողովին և գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի նիստին:

Ակադեմիկոս Աշոտ Սաղյանը ներկայացրել է այն ծրագրերը, որոնք ՀՀ ԳԱԱ-ի

ինստիտուտներն իրականացնում են ԱՊՀ պետությունների գիտական կազմակերպությունների հետ համատեղ: Աշոտ Սաղյանն առաջարկել է ստեղծել ԱՊՀ պետությունների միջակադեմիական հիմնադրամ՝ հիմնարար հետազոտությունների իրականացման համար, ինչը կխթանի երիտասարդ գիտնականների համագործակցությունը և առաջընթացը: Նա նաև առաջարկել է ստեղծել հանձնաժողով, որը կիրականացնի միջակադեմիական հետազոտություններ պատմական գիտութ-

➤2



«Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահը Միմսկում...



➤1 յունների ուղորտում: «Եթե առաջանում է քաղաքական կոնֆլիկտ պետությունների դեկլարների միջև, գիտնականները պետք է ասեն իրենց խոսքը և տան իրենց գնահատականը», - շեշտել է Աշոտ Սաղյանը:

Համաժողովին ներկա գրեթե բոլոր ակադեմիկոսների պատվիրակություններն առաջարկել են իրականացնել համատեղ հետազոտություններ՝ կապված ՔՈՎԻԴ-19-ի հետ: «Այսօր տեղի են ունենում անսպասելի մարտահրավերներ, որոնց պետք է դիմակայել, ինչպես ՔՈՎԻԴ-19-ը: Հրատապ է, որպեսզի պետությունները, ակադեմիկոսները, գիտնականները համախմբվեն, համալրեն իրենց գիտական ուժն ու պոտենցիալը, որպեսզի կարողանան պայքարել այս արհավիրքի դեմ», - ասել է ակադեմիկոս Սաղյանը: Նա հայտնել է, որ ավելի քան մեկ տարի ՀՀ ԳԱԱ-ին կից ստեղծված է գիտական խորհուրդ՝ կազմված լավագույն մասնագետներից, որոնք ՔՈՎԻԴ-19-ի հետ կապված աշխատանքներ են տանում, կազմել են համալիր ծրագիր, և ՀՀ ԳԱԱ-ն իր առաջարկություններով պատրաստ է մտնելու համագործակցության դաշտ ՔՈՎԻԴ-19-ի դեմ պայքարում:

ՀՀ ԳԱԱ-ի պատվիրակության

կազմից համաժողովին ելույթ են ունեցել ՀՀ ԳԱԱ նախագահի գլխավոր խորհրդական, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Ռուբեն Հարությունյանը, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր Բարդուխ Գաբրիելյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը:

Անցկացվել են գիտությունների ակադեմիկոսների միջազգային ասոցիացիայի նոր ընտրություններ: Աշոտ Սաղյանը ընտրվել է ԳԱԱ-ի անդամ:

ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանը Բելառուսի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Վլադիմիր Գուսակովի հետ քննարկել է համագործակցության ծրագրերը: Ներկայում կա 16 ծրագիր, որոնք համատեղ իրականացնում են երկու պետությունների ակադեմիկոսների ինստիտուտները՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և Բելառուսի հիմնարար հետազոտությունների հիմնադրամի ֆինանսավորմամբ: «Որոշվել է առաջիկայում կնքել

համագործակցության հուշագիր, որը կազմված կլինի Հայաստանի և Բելառուսի համար հրատապ և ակտուալ կետերից: Հայաստանը Բելառուս կգործողի մասնագիտական պատվիրակություն՝ ճանապարհային քարտեզը կազմելու նպատակով, իսկ հուշագիրը կստորագրվի Վլադիմիր Գուսակովի՝ նոյեմբերին նախատեսված Հայաստան այցի ժամանակ», - ասաց Աշոտ Սաղյանը:

Սեպտեմբերի 30-ին Աշոտ Սաղյանը մեկնել է Մոսկվա և հանդիպում է ունեցել Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի նախագահ Ալեքսանդր Մերգելի հետ: Հանդիպմանը մասնակցել է նաև ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Արթուր Իշխանյանը: Կողմերը քննարկել են երկու պետությունների ակադեմիկոսների միջև ստորագրվելիք համագործակցության ճանապարհային քարտեզը, որում ներառված են այն ուղղությունները, որոնք գերակա են և՛ ՀՀ-ի, և՛ ՌԴ-ի համար: Ընդգծվել է Սևանա և Բայկալ լճերի հիդրոէկոլոգիական վիճակի վերաբերյալ, ինչպես նաև սեյսմոլոգիական, կենսատեխնոլոգիական համատեղ հետազոտությունների իրականացման անհրաժեշտությունը: «Մենք պետք է ուժեղացնենք համագործակցությունը և ընտրենք այն ուղղությունները, առավելագույն 10-ը, որոնք արդիական են երկու պետությունների համար», - նշել է Աշոտ Սաղյանը: Ճանապարհային քարտեզի ստորագրումը նախատեսված է հոկտեմբերին՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի պատվիրակության՝ Հայաստան այցի ժամանակ:

Ալեքսանդր Մերգելի հետ հանդիպմանը Աշոտ Սաղյանը բարձրացրել է նպատակային ասպիրանտուրայի հետ կապված հարցը: «Սա կլինի լուրջ քայլ երիտասարդներին հայ-ռուսական գիտության շրջանակներում պահելու ուղղությամբ: Մեր պատմական կապերը պետք է զարգացնել ու ճկուն կերպով փոխանցել սերունդներին», - ասել է ակադեմիկոս Աշոտ Սաղյանը: Ալեքսանդր Մերգելը դրական է արձագանքել ՀՀ ԳԱԱ նախագահի առաջարկին:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն



ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանին շնորհվել է Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի «ԳԱՄԱ ակադեմիկոս» հատուկ նշան

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահի գլխավոր խորհրդական, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը պարգևատրվել է Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի «ԳԱՄԱ ակադեմիկոս» հատուկ նշանով: Պարգևատրման արարողությունը տեղի է ունեցել սեպտեմբերի 28-29-ին Միմսկում կայացած Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի (ԳԱՄԱ) 34-րդ նիստի շրջանակներում:

Ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը ԳԱՄԱ-ի հիմնադիրներից է: 2018-2019 թթ.-ին նա եղել է ԳԱՄԱ-ի փոխնախագահ: Ռադիկ Մարտիրոսյանն ասաց, որ ԳԱՄԱ-ի 34-րդ նիստն անցկացվել է բարձր մակարդակով՝ առաջատար գիտնականների մասնակցությամբ, ինչպիսիք են «Կուրչատովի անվան ինստիտուտ» ազգային հետազոտական կենտրոնի տնօրեն Միխայիլ Կովալչուկը, Ռուբենյանի Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի տնօրեն Գրիգորի Տրուբնիկովը, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Սիբիրյան մասնաճյուղի նախագահ Վալենտին Պարմոնը, Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի ռեկտոր Վիկտոր Սադովնիչին և այլ նշանավոր գիտնականներ:

«1993 թ.-ից, երբ հիմնադրվեց Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիան, ես մշտապես աջակցել եմ ասոցիացիայի հիմնական նպատակներին՝ խթանել տարբեր երկրների գիտնականների համագործակցությունը, աջակցել երիտասարդ գիտնականներին, քննարկել գիտական կենտրոնների ծրագրերը: Ես կարծում եմ, որ անհրաժեշտ է ունենալ հիմնարար հետազոտությունների հիմնադրամ, որը կաջակցի գիտական համատեղ ծրագրերի իրականացմանը: Շատ կարևոր է նաև առաջ մղել մեխանիզմներ, որոնք կաջակցեն երիտասարդ գիտնականների համագործակցությանը և կնպաստեն նրանց առաջընթացին», - նշեց ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի 100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության շենքում հոկտեմբերի 19-ին՝ ժամը 10:00-ին, մեկնարկեց «Հայաստանը և տարածաշրջանը. դասեր, արժևորումներ, հեռանկարներ» խորագրով եռօրյա միջազգային գիտաժողովը՝ նվիրված 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի 100-ամյակին:

Գիտաժողովին օրհնության խոսք հղեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրիել Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը: Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը, ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը, ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռոբերտ Ղազարյանը և ՀՀ Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր Խաչատուրյանը:

Գիտաժողովի երկու նիստերի ժամանակ՝ «Մոսկվայի և Կարսի պայմանագրերը. դասեր 100-ամյա հետազոտությունից» և «Արժևորումներ պատմաիրավական և քաղաքական տեսանկյունից», զեկույցներով հանդես եկան անվանի պատմաբաններ, հայաստանյան և միջազգային փորձագետներ, ՀՀ ԳԱԱ գիտաշխատողներ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամներ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն



Կարսի համայնապատկերը

«Գենետիկա XXI» կլոր սեղանը՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում

Ս.թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում անցկացվեց «Գենետիկա XXI» կլոր սեղանը, որը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ-ն և Հայաստանում «Ռոսսոտրուդնիչեստվո»-ի ներկայացուցչությունը՝ Ռուսաստանի Դաշնության «Գիտության և տեխնոլոգիայի տարի-2021»-ի շրջանակներում:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանը: «Գիտության մեջ այսօր ակտուալ են այն ուղղությունները, որոնք կապված են կենսաբանական գիտության ոլորտում մասնագիտացման, կենսաիմունոտեխնոլոգիայի հետ, որոնց զարգացման կարևորագույն բաղադրիչներն են գենետիկական հետազոտությունները: Դրանք Հայաստանում բավական հաջողությամբ իրականացվում են, այդ թվում՝ Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում: Այսօր աշխարհում տեղի են ունենում շատ բարդ և վտանգավոր գործընթացներ, մարդկությունը կանգնում է բարդ մարտահրավերների առջև: Անգամ շատ հարուստ ռեսուրսներ ունեցող երկրները միայնակ չեն կարող կանխել այդ մարտահրավերները: Անհրաժեշտ է համագործակցություն, գիտական ներուժի ու ջանքերի միավորում», - ասաց Աշոտ Սադյանը:

Նա նշեց, որ համագործակցության ամրապնդման նպատակով շեշտվել է վերջերս Միևնույն անցկացված ԱՊՀ պետությունների համագործակցության 30-ամյակին նվիրված գիտաժողովի ժամանակ և Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ Ալեքսանդր Սերգեևի հետ հանդիպման ժամանակ: «Հայկական և ռուսական գիտությունները սերտորեն կապված են, և մենք պետք է շարունակենք պահպանել և զարգացնել այդ կապերը», - ասաց ակադեմիկոս Սադյանը:



յանը:

Իր ողջունի խոսքում Հայաստանում «Ռոսսոտրուդնիչեստվո»-ի ներկայացուցչության տնօրեն Վադիմ Ֆեֆիլովն ասաց. «Ինձ համար մեծ պատիվ է գտնվել գիտությունների ազգային ակադեմիայի շենքում: Շատ կարևոր է մեր հանդիպման թեման, որը կապված է ամենակարևոր և ակտուալ գիտություններից մեկի՝ գենետիկայի հետ, հատկապես հիմա, երբ Ռուսաստանում հայտարարված է գիտության և տեխնոլոգիայի տարի: Գենետիկայի հարցերը հուզում են բոլորիս, և մենք բաց ենք ձեր առաջարկությունների համար՝ կապված համատեղ այցերի, հանդիպումների և քննարկումների հետ»:

Կլոր սեղանին մասնակից ռուս և հայ գիտնականները ներկայացրին իրենց գիտական զեկույցները: ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ԵՊՀ-ի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Ռուբեն Հարությունյանը ներկայացրեց «Էկոգենետիկ ուսումնասիրությունները Հայաստանում» զեկույցը, որի նպա-



տակն է Հայաստանում ջրի և հողի գենոտիպի աղտոտման փորձարկման մեթոդների մշակումը՝ կենսաինդիկատոր օրգանիզմների միջոցով: ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի և Ռուս-հայկական համալսարանի Կենսաբժշկության և դեղագործության ինստիտուտի տնօրեն, կենսաբանական գիտությունների դոկտոր Արսեն Առաքելյանը ներկայացրեց «Ֆունկցիո-

նալ գենոմիկան կենսաբանական հետազոտություններում» զեկույցը՝ կապված տիեզերական ճառագայթման շատ ցածր չափաբաժինների երկարաժամկետ ազդեցության ֆունկցիոնալ գենոմիկայի, կորոնավիրուսի տարբերակների մոլեկուլային գենետիկական վերլուծության, գենոմային բիոինֆորմատիկայի, ուռուցքաբանության և այլ հիվանդությունների մեջ: ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի էթնոգենոմիկայի լաբորատորիայի վարիչ, պրոֆեսոր Լևոն Եպիսկոպոսյանը ներկայացրեց գենետիկական անթրոպոլոգիա թեման՝ հայ-ռուսական համագործակցության շրջանակներում:

Վավերովի անվան բույսերի գենետիկական ռեսուրսների ինստիտուտի տնօրեն, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի պրոֆեսոր Ելենա Խլոստկինան և տեղակալ Ալեքսեյ Զավարզինը ներկայացրին «Գենետիկական պաշարները՝ որպես գիտության և անվտանգության զարգացման հիմք» զեկույցը, Ռուսաստանի Դաշնության Բուռնագյանի անվան պետական բժշկական կենսաֆիզիկական կենտրոնի պրոֆեսոր Անդրեյ Օսիպովը ներկայացրեց իրենց գիտական կենտրոնի վերջին նվաճումները, ռադիացիոն գենետիկայի ասպարեզում գիտական արդյունքները, որոնք ստացվել են Ռուսաստանի գիտության ֆոնդի ծրագրի շրջանակներում՝ հայ գիտնականների հետ համատեղ:

Կլոր սեղանի անցկացմանն աջակցեցին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության կոմիտեն և ԵՊՀ-ի կենսաբանության ֆակուլտետը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

«Հայոց ցեղասպանության, հայկական պահանջատիրության և արցախյան հիմնահարցի խաչմերուկներում. հետահայաց գնահատումներ և հեռանկարներ» գիտաժողովը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում

Ս.թ. սեպտեմբերի 17-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում շարունակվեց եռօրյա գիտաժողովը՝ նվիրված «Հայոց ցեղասպանության, հայկական պահանջատիրության և արցախյան հիմնահարցի խաչմերուկներում. հետահայաց գնահատումներ և հեռանկարներ» թեմային:

Գիտաժողովը համատեղ կազմակերպել էին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը, Երևանի պետական համալսարանի և Հայագիտական ուսմանը ընկերակցությունը:

Այսօր քննարկվեց «Հայրենագրվում և պահանջատիրություն. պատմաիրավական գնահատականներ» թեման՝ Հայոց ցեղասպանության խնդիրը ՀՀ արտաքին քաղաքականության ոլորտում, հայատյացությունը և ժխտողականությունը թուրքիայում և Ադրբեջանում, թուրքիայի ռազմական միջամտությունը 2020 թ.-ի Արցախյան պատերազմին, սփյուռքահայության գործունեությունը Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնահարցում և այլ հարցեր:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը նշեց, որ առաջին անգամ արևմտահայության ցեղասպանության և Արցախի

խնդիրները զուգահեռաբար քննարկվեցին մեկ գիտաժողովի շրջանակներում: «Արցախյան վերջին պատերազմը և Արցախի ներկայիս վիճակը ցույց տվեցին, որ Հայոց ցեղասպանության խնդիրը միայն արևմտահայության խնդիր չէ: Այն Արցախի հայության և Հայաստանի Հանրապետության արևելյան բնակավայրերի բնակչությանը վերաբերող և նրա գլխին որպես վտանգ կախված իրողություն է: Մենք խորապես համոզված ենք, որ եթե չլիներ ռուս խաղաղապահների հարցը օրակարգում, այս ամբողջը կարող էր արևելահայությանը համար ավարտվել մոր ցեղասպանությամբ: Խոսելով ցեղասպանության մասին՝ խոսում էինք Հայաստանի Հանրապետության անվտանգության մասին, աշխարհին հիշեցնում, որ մենք կրկին գործ ունենք նույն ցեղասպան թուրքիայի և նրա աշակերտող հանդիսացող Ադրբեջանի հետ», - վստահ է Աշոտ Մելքոնյանը:

Հիշեցնենք, որ գիտաժողովը մեկնարկել էր սեպտեմբերի 16-ին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում, որտեղ մասնակիցները ծանոթացան «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի և Հայաստանի ազգային արխիվի համատեղ կազմակերպած «Հայոց պահանջատիրության հետքերով. հայերի մասնավոր և համայն-



քապատկան գույքի սեփականության վկայագրերը» խորագրով ժամանակավոր ցուցադրությանը:

Գիտաժողովը շարունակվեց սեպտեմբերի 18-ին՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում, որտեղ կայացան կլոր սեղաններ՝ «Ադրբեջանական իշխանությունների հայատյացության և ցեղասպան քաղաքականությունը ադրբեջանահայության և արցախահայության նկատմամբ»,

«Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունը միջգիտակարգային տիրույթում», «Հայոց ցեղասպանության ծանաչման և հատուցման գործընթաց. ձեռքբերումներ, խնդիրներ, սպասելիքներ», «Ցեղասպանության քաղաքականության դրսևորումները երկրորդ արցախյան պատերազմի ժամանակ» թեմաներով:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ԸԱՂՈՐԴՈՒՄ

ԱՐՑԱԽԻ ԸԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԸԱՅԱՍՏԱՆԻ (ԵՐՐՈՐԴ) ԸԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԱԿՄԱՆ 30-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021 թ. սեպտեմբերի 19-21-ը Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում և 23-ին Երևանում տեղի ունեցավ միջազգային գիտաժողով՝ նվիրված Արցախի Հանրապետության և Հայաստանի (Երրորդ) Հանրապետության հռչակման 30-րդ տարեդարձին, որը կազմակերպել էին Արցախի Հանրապետության Ազգային ժողովը, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ: Գիտաժողովին մասնակցում էին հայ և այլազգի շուրջ չորս տասնյակ գիտնականներ Հայաստանից, Արցախից, Ռուսաստանի Դաշնությունից, Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից և Ֆրանսիայից: Հայաստանյան գիտնականների թվում ենթակայացուցական էր ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի յոթ գիտաշխատողների մասնակցությունը:

Ստեփանակերտ հասնելուն պես գիտաժողովի մասնակիցներն այցելեցին Արցախյան պատերազմի զոհերի հուշահամալիր և ծաղիկներ խոնարհեցին Հայրենիքի ազատության ու անկախության համար պայքարում զոհված մարտիկների շիրիմներին՝ ի նշան նրանց անմահ հիշատակի:

Սեպտեմբերի 20-ին Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նիստերի դահլիճում հանդիսավորապես բացվեց միջազգային գիտաժողովը: Բացման խոսքով հանդես եկավ ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Լուսինե Ղարախանյանը: Ողջույնի խոսքով հանդես եկան ԱՀ ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանը, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Վրթանես Եպիսկոպոս Աբրահամյանը: Այնուհետև լիազորմար գեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ ակադեմիկոս Ա. շոտ Մելքոնյանը, ԱՀ ԱԺ արտաքին հարա-



բերությունների հանձնաժողովի նախագահ, պ. գ. դ., պրոֆ. Վահրամ Բալայանը, ՀՀ ԳԱԱ պատմավոր անդամ Ռուբեն Գալստյանը (Լոնդոն), պ. գ. դ., պրոֆ. Ալեքսան Հակոբյանը (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ), իսկ սահմանադրական և միջազգային իրավունքի մասնագետ, պրոֆեսոր Օտտո Լուխտերհանդտի (Գերմանիա) գեկուցումն ընթերցեց ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. գ. թ., դոց. Լիլիթ Հովհաննիսյանը:

Գիտաժողովի երեք մասնախմբային նիստերն ընթացան իրար զուգահեռ՝ ԱՀ ԱԺ նիստերի դահլիճում, ԱրԴՀ վարչական մասնաշենքում և ԱԺ փոքր դահլիճում: Ա մասնախումբն աշխատում էր «Պատմություն» խորագրի ներքո (նախագահողներ՝ Ա. շոտ Մելքոնյան, Վահրամ Բալայան, Ալեքսան Հակոբյան, պ. գ. դ., պրոֆ. Գևորգ Ստեփանյան): Բ մասնախմբի խորագիրն էր՝ «Պատմություն և մշակույթ» (նախագահողներ՝ ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի վարիչ, պ. գ. դ., պրոֆ. Համլետ Պետրոսյան, ԱրԴՀ դասախոս Լեռնիկ Հովհաննիսյան): Գ

մասնախումբը կրում էր «Քաղաքագիտություն» խորագիրը (նախագահողներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, փ. գ. դ., պրոֆ. Ալեքսանդր Մանասյան, պ. գ. դ., պրոֆ. Արմեն Մարության):

Գիտաժողովի նիստերին մասնակցում էին ԱՀ ԱԺ պատգամավորներ, կառավարության անդամներ: Ձեկուցողներն իրենց ելույթներում բարձրացնում էին ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում ԼՂ խնդրի համապարփակ կարգավորման, Արցախի իրավական կարգավիճակի վերջնական որոշման՝ հայ բնակչության ինքնորոշման իրավունքի իրացման և ԼՂՀ անկախության ճանաչման հարցերը:

Մասնախմբերի աշխատանքներն ամփոփվեցին եզրափակիչ լիազումար նիստով, որում կենտրոնականը ԱՀ արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանի անկեղծ ու հանգամանակից ելույթն էր՝ նվիրված ԱՀ արտաքին քաղաքականության գերակա խնդիրներին: Դրան հաջորդեցին մասնախմբերի նախագահների հաղորդումները գիտական գեկուցումների արդյունք-

ների վերաբերյալ: Այնուհետև Արցախի Հանրապետության արդի մարտահրավերների վերաբերյալ գիտնականների քննարկումներին հիման վրա ընդունվեց Արցախի Հանրապետության և Հայաստանի (Երրորդ) Հանրապետության հռչակման 30-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովի բանաձևը, և հրապարակվեց համապատասխան հայտարարությունը:

Սեպտեմբերի 21-ին գիտաժողովի մասնակիցները մեկնեցին Գանձասար, մասնակցեցին «Աղբյուրների ցեղասպանական վարք» Պատմություն և արդիականություն (իրավաքաղաքական գնահատականից մինչև միջազգային դատարան)» (Երևան, «Էդիթ պրինտ», «Կանաչ» գիտական կենտրոն, 2021) վերնագրով ժողովածուի շնորհանդեսին, որում ամփոփված են 2020 թ. հուլիսին տեղի ունեցած Շուշիի հայ բնակչության ցեղասպանության 100-րդ տարեկիցին նվիրված միջազգային առցանց գիտաժողովի գեկուցումները:

Գիտաժողովն իր աշխատանքը շարունակեց սեպտեմբերի 23-ին Երևանում: ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի կլոր սրահում տեղի ունեցավ Կլոր սեղան՝ նվիրված Հայաստանի Հանրապետության հռչակման 30-ամյակին, որը նախագահում էր ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ԳԱԱ ակադեմիկոս, գիտաժողովի կազմկոմիտեի համանախագահ Յուրի Սուվարյանը: Ելույթ ունեցան Յուրի Սուվարյանը, ԳԱԱ ակադեմիկոսներ Ռուբեն Սաֆրաստյանը, Լենսեր Աղալովյանը, Աշոտ Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալեքսանդր Մանասյանը, պ. գ. դ., պրոֆեսորներ Էդիկ Մինասյանը, Գևորգ Ստեփանյանը, փ. գ. թ., քաղաքագետ Միհրան Շահադեյանը:

Հայագիտությունը՝ Եվրոպական միության ուշադրության կենտրոնում



Հոկտեմբերի 8-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում ներկայացվեց «Պատմական Հայաստանը որպես Եվրոպայի և Ասիայի միջնակայանի հարաբերությունների հանգույց 9-14 դդ.» եվրոպական ծրագիրը:

Ծրագրի հեղինակը միջազգային ճանաչում ունեցող գիտնական, ՀՀ-ում Ֆլորենցիայի համալսարանի պրոֆեսոր Զարուհի Պողոսյանն է: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից, արժեքը 2-2.5 միլիոն եվրո է, տևողությունը՝ 5 տարի:

Ծրագրի կարևորագույն նպատակներից է ներկայացնել պատմական Հայաստանի տեղը և դերը միջին դարերում՝ որպես Եվրասիայի միջնակայանի հարաբերությունների կարևորագույն հանգույցներից մեկը: Կարևոր է միավորել տարբեր ոլորտների մասնագետների աշխատանքը, որպեսզի համակարգված և միասնական ուսումնասիրվեն բազմալեզու աղբյուրները, պարզվեն գաղափարների, գրական ժանրերի, արվեստների, ավանդույթների շրջանառությունը, դրա ուղիները:

«Մեր թիմի ուշադրության կենտրոնում է պատմական Հայաստանը և այն շրջապատող ավելի լայն աշխարհագրական լի տարածք, որը ձգվում է Կովկասյան լեռների հարավից դեպի արևմուտք՝ մինչև Անատոլիա, և դեպի հարավ՝ մինչև Հյուսիսային Մի-

ջագետք: Սրանք այն շրջաններն են, որոնց բնակչության հետ հայերն ունեցել են դարավոր պատմամշակութային կապեր: Ծրագրի շրջանակներում կպարզվի, թե բնակչության լայն զանգվածների միգրացիան կամ զինված ուժերի ներխուժման հետևանքով նոր տարածքների գրավումն ինչ տիպի մշակութային փոփոխություններ են ստեղծում, ինչպես են ձևավորվում և զարգանում զավթված բնակչության և այլազգի տիրապետող վերնախավի հարաբերությունները, ինչ ազդեցություն են թողնում այս հանգամանքները հասարակական նորմերի կամ ազգային ավանդույթների վրա», - ասաց Զարուհի Պողոսյանը՝ նշելով, որ ծրագրով շրջանառության մեջ կդրվի մեծ ծավալի աղբյուրագիտական նյութ, հատկապես հայոց լեզվով, ինչը հիմք կհանդիսանա նորանոր ուսումնասիրությունների համար:

Ծրագրի շրջանակներում Ֆլորենցիայի համալսարանում կստեղծվի հայագիտության կենտրոն, որի միջոցով կընդլայնվի համագործակցությունը Հայաստանում գործող գիտնականների հետ:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը շնորհավորեց պրոֆեսոր Զարուհի Պողոսյանին: «Ծրագրի թեման ունի գերադիական նշա-



նակություն: Հենց այդ ժամանակահատվածում հայ մշակույթը վերելք է ապրել, զարգացել են կերպարվեստը, պոեզիան, ճարտարապետությունը, այդ ժամանակահատվածում են ստեղծվել բրկու հայկական պետականությունները՝ Բագրատունյաց Հայաստանը և Կիլիկյան Հայաստանը: Այդ ժամանակահատվածն անվանում են Հայկական վերածնունդ (ռենեսանս), և այս հետազոտությունը՝ որպես երկու մայրցամաքների մշակութային համագործակցության հանգույց, շատ կարևոր է: Ծրագիրը կնպաստի մեր մշակութային արժեքների պաշտպանությանը, զերծ կպահի մեր մշակույթը կեղծիքներից, կնպաստի հայագիտության զարգացմանը, և կստեղծվի ու կզարգանա հայագիտական կենտրոն Ֆլորենցիայի համալսարանում», - ասաց Յուրի Սուվարյանը: Նա նշեց, որ անհրաժեշտ է ծրագրի հետազոտական աշխատանքներին ներգրավել նաև հայաստանյան հայագետներին:

ՀՀ-ում Եվրոպական միության պատվիրակության համագործակցության բաժնի վարիչ Ֆրանկ Հեսսը, շնորհավորելով ծրագրի թիմին, շեշտեց նախատեսվող հետազոտությունների և տարբեր երկրների մասնագետների համագործակցության կարևորությունը:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն Վահան Տեր-Ղևոնդյանը նշեց, որ նման հետազոտությունները հնարավոր

ություն են տալիս ճանաչելի դարձնելու Հայաստանը և հայ ժողովրդի մշակույթը գիտական շրջանակների ու լայն հասարակության համար: «Մեր նպատակն է, որ հայագիտությունը շարունակի մնալ որպես միջազգային գիտություն, ինչը շատ կարևոր է», - ասաց Վահան Տեր-Ղևոնդյանը:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի իսկական անդամ Ռուբեն Սաֆրաստյանը նշեց, որ բացառիկ երևույթ է, երբ Եվրոպական միության կողմից հատկացվում է նման ուշադրություն հայագիտության զարգացմանը ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհում: «Այս ծրագրի միջոցով հայագիտությունը դառնում է եվրոպական գիտության մի մասը: Շատ կարևոր է, որ հայաստանյան հայագիտությունը սկսում է տիրապետել ժամանակակից գիտության լեզվին: Մենք պետք է կարողանանք մեր աղբյուրները շրջանառության մեջ դնել այնպիսի գիտական լեզվով, որը հասկանալի և ընդունելի է ժամանակակից գիտության համար: Համաշխարհային հայագիտություն է մտնում մի նոր սերունդ, որն իր հետ բերում է նոր մոտեցումներ, նոր աշխարհընկալում, և դրանք համաեվրոպական են, ինչը շատ կարևոր հանգամանք է մեր ժողովրդի համար», - ասաց Ռուբեն Սաֆրաստյանը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Շայ գիտնականների նվաճումը վնասված կամ ոչ ֆունկցիոնալ օրգանների վերականգնման և փոխարինման համար սկաֆոլդների ստեղծման գործում

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Լևոն Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտնականները մշակում են ոչ իմունոգեն, փոխպատվաստման պատրաստ սկաֆոլդներ կամ բջջային մատրիքսներ, որոնք կարող են օգտագործվել ռեգեներատիվ բժշկության մեջ՝ վնասված կամ ոչ ֆունկցիոնալ օրգանների, հյուսվածքների վերականգնման և փոխարինման համար:

Հետազոտություններն իրականացվում են Ֆիզիոլոգիայի ինստիտուտի իմունոլոգիայի և հյուսվածքային իմենտերիայի լաբորատորիայում՝ կենսաբանական գիտությունների թեկնածու Զարուհի Կարաբեկյանի գլխավորությամբ:

Են ինչպես առնետների, մկների, ճագարների, խոզերի, այնպես էլ մարդու հյուսվածքային նմուշներ: «Փորձեր ենք իրականացրել՝ ստեղծելու մաշկի սկաֆոլդի անասնամանակակա և մատչելի աղբյուր հանդիսացող այլընտրանքային սկաֆոլդ՝ մաշկի փոխպատվաստման համար: Ինչպես նաև փորձեր են արվում ամբողջական օրգանների իմենտերիայի ուղղությամբ՝ նպատակ ունենալով ստանալու ամբողջական լյարդ և երիկամ: Հետազոտություններն ունեցել են դրական ելք», - նշում է Զարուհի Կարաբեկյանը:

Որպեսզի օրգանիզմը չվնասվի սկաֆոլդ փոխպատվաստման ժամանակ, այսինքն՝ տեղի չունենա օրգանիզմի կողմից

հնարավորությունը: Բանն այն է, որ աշխարհում բջիջների կուլտիվացման համար մեծ մասամբ կիրառվում է կովի սաղմնային արյան շիճուկ՝ որպես սննդամիջավայր: Լինելով կենդանական ծագման՝ այն պարունակում է ռիսկեր, որոնցից է կենդանական հիվանդությունների փոխանցումը: Այդ պատճառով մարդկային բջիջների և հյուսվածքների կուլտիվացման համար որպես հնարավոր օպտիմալ այլընտրանք կարելի է դիտարկել մարդկային շիճուկի կիրառումը: Մեր կողմից իրականացված փոխարինող շիճուկի հետազոտությունները ևս դրական ելք են ունեցել՝ ապահովելով բարձր էֆեկտիվություն: Աշխատանքները շարունակվում են էֆեկտիվության երկարաժամկետությունն ապահովելու ուղղությամբ», - նշում է Զարուհի Կարաբեկյանը:


Կատարված հետազոտությունները ներկայացվել են տարբեր միջազգային համաժողովների ժամանակ: Որպես համահեղինակ Springer հրատարակչությունում 2020 թվականին տպագրվել է «Հյուսվածքային իմենտերիա» գիրքը (հեղինակներ՝ Նարինե Սարվազյան (Կ.գ.թ.), Զարուհի Կարաբեկյան (Կ.գ.թ.), Հովհաննես Արեստակեսյան (Կ.գ.թ.), Վահան Գրիգորյան, Վարդան Ավետիսյան, Լիանա Հայրապետյան, Մարիամ Գրիգորյան, Աստղիկ Կարապետյան, Արտեմ Օգանեսյան, Արման Սիմոնյան, Աննա Սիմոնյան): Ինչպես նաև համատեղ ջանքերով տպագրվել է հոդված «Research on Biomedical Engineering» հեղինակավոր պարբերականում (<https://doi.org/10.1007/s42600-021-00141-8>), (հեղինակներ՝ Լիանա Հայրապետյան, Հովհաննես Արեստակեսյան (Կ.գ.թ.), Անուշ Մարգարյան, Արտեմ Օգանեսյան, Վահան Գրիգորյան և Աստղիկ Կարապետյան):

Հետազոտություններն իրականացվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության պետական կոմիտեի ֆինանսավորմամբ՝ «Engineered skin via natural resources» (Grant Number 18T-1F275), «Generation of non-immunogenic Mesenchymal Stem Cells for Tissue Repair» (Grant Number 15T-1F359) ծրագրերի, ինչպես նաև հայրենաշուկային գիտական համագործակցությամբ ձեռք բերված դրամաշնորհի շրջանակներում՝ «Biocompatibility of multicompartment allogeneic cells with decellularized liver scaffold», (Grant Number 18BL-028):

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ ԳԻՐՔ ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ընթերցողի սեղանին է դրվել Տիգրան Հարությունյանի և Արփիմե Կյուրեղյանի «Գործարար միջավայրի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (կիրառական դիտարկումներ)» գիրքը, 136 էջ ծավալով: Այն տպագրվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:



- Գրքում ներկայացված են գործարար միջավայրի կառավարման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Գործարար միջավայրի գրավչությունը պայմանավորված է ոչ միայն հարկային համակարգով, այլև մակրոտնտեսական ցուցանիշների ունեցած ազդեցությամբ, - գրույցի ընթացքում նշեց ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Հարությունյանը:

Աշխատանքում տեղ են գտել մի շարք հետաքրքիր բաժիններ՝ «Գործարար միջավայրի կառուցվածքն ու բնութագրող տարրերը», «Տնտեսական զարգացման առաջնահերթությունների գնահատման մեխանիզմները», «Գործարար միջավայրի կառավարման արդյունավետության բարձրացման մեխանիզմները ՀՀ-ում» և այլն: Իրականացվել է ռեգրեսիոն վերլուծություն և հիմնավորվել դրանց ազդեցությունը տնտեսական ակտիվության վրա:

Գրքում առաջադրված հարցերը կարող են օգտակար լինել կազմակերպությունների, տնտեսագետների, ինչպես նաև ոլորտի մասնագետների համար:

Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆ
Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ, տեխնիկական գիտությունների թեկնածու



«Սկաֆոլդ ստանալու առաջին քայլը կենդանական հյուսվածքի ապաբջջանացումն է՝ կենդանու հյուսվածքից բոլոր կենդանական բջիջների հեռացումը, որի արդյունքում մնում է թափանցիկ արտաբջջային մատրիքս կամ սկաֆոլդ: Սկաֆոլդը հյուսվածքային ճարտարագիտության մեթոդներում օգտագործվող կառուցվածք է, որը ծառայում է որպես հենարան բջիջների համար՝ ապահովելով դրանց ամրանալու և գոյատևելու հնարավորությունը, նմանակելով և փոխարինելով նորմալում այդ բջիջն շրջապատող արտաբջջային մատրիքսին: Բջիջներից ազատ մատրիքսը նյութակառուցվածքային կազմությամբ գրեթե չի տարբերվում կենդանիների և մարդկանց մոտ, որն էլ հնարավորություն է տալիս կենդանական աղբյուրներից ստացված սկաֆոլդը վերաբնակեցնելու մարդկային բջիջներով և փոխպատվաստելու հենց մարդուն», - բացատրում է Զարուհի Կարաբեկյանը:

Ըստ նրա՝ փորձերում օգտագործվել

փոխպատվաստուկի մերժում, պետք է, որ փոխպատվաստվող հյուսվածքի բջիջներն օժտված լինեն նույն մակերեսային սպիտակուցների խմբերով, ինչ ռեցիպիենտի բջիջները: Այս նպատակով Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտում սկսել են ստեղծել հայկական պոպուլյացիային բնորոշ մեգենքիմալ ցողունային բջիջների շտեմարան, որպեսզի հետագայում կարողանան տարբերակել ու կիրառել հետազոտական և կլինիկական նպատակներով՝ ընտրել պացիենտին համապատասխանող տեսակը և դրա միջոցով կառուցել փոխպատվաստվելիք հյուսվածքը:

«Մեր լաբորատորիայում փորձեր են արվում ստանալ մաշկի և սրտի փակա-նի սկաֆոլդներ բիոտպագրության մեթոդով, որպեսզի ստացված արդյունքը համեմատենք բնական ծագում ունեցող սկաֆոլդների հետ և ընտրենք լավագույնը: Բացի այդ, հետազոտել ենք բջիջների կուլտիվացման (պահման և աճեցման) համար մարդկային շիճուկի կիրառման

ՀՀ ԳԱԱ-ում քննարկվեց ՀՀ-ում պղնձի արտադրության և ծծմբային միացությունների վերամշակմանն ուղղված ՀՀ ԳԱԱ ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի կողմից առաջարկվող համալիր մոտեցումը

ՀՀ ԳԱԱ ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն Կարեն Գրիգորյանը ներկայացրեց «ՀՀ ԳԱԱ ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի կողմից ՀՀ-ում պղնձի արտադրության և ծծմբային միացությունների վերամշակմանն ուղղված առաջարկվող համալիր մոտեցումը» թեմայով գիտական հաղորդումը հունիսի 15-ին կայացած գիտական քննարկման ժամանակ:

Քննարկմանը մասնակցեցին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոյանը, ՀՀ ԳԱԱ քիմիայի և երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Լևոն Թավադյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարարի հասարակական հիմունքներով



խորհրդական Ռաֆայել Գևորգյանը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացուցիչ Կարեն Գասպարյանը, ՀՀ

գիտության վաստակավոր գործիչ Սուրեն Աղբալյանը, ՀՀ ԳԱԱ ինստիտուտների տնօրեններ, գիտաշխատողներ, ԵՊՀ-ի, ՀԱՊՀ-ի, ՀՊՏՀ-ի, ՀԱՄՀ-ի և այլ բուհերի

գիտնականներ:

Քննարկվեցին պղնձի արտադրության կարևորության, ծծմբական թթվի, մաքուր պղնձի արտադրության շահավետության հարցերը ՀՀ-ում, ինչպես նաև՝ ծծմբական թթվից ՀՀ-ում սպառվող նյութերի արտադրության հնարավորությունը: Մասնակիցներն անդրադարձան նոր տեխնոլոգիաների և տեխնիկայի ներդրման գարգացման հեռանկարներին: Հատուկ ընդգծվեց ճարտարագետ-տեխնոլոգների պատրաստման անհրաժեշտությունը քիմիայի և մետալուրգիայի բնագավառներում:

Քննարկումը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ քիմիայի և երկրի մասին գիտությունների բաժանմունքը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ԲՈՐԻՍ ԼԱՉԱՐԵՎՍԿՈՒ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

XX դարի 10-ական թվականների ռուս գրական գործիչների շարքում, ովքեր իրենց ստեղծագործություններում արտացոլել են հայ իրականությունը, յուրահատուկ տեղ է գրավում իր ժամանակի ճանաչված արձակագիր Բորիս Լազարևսկին (1871-1936): Լինելով ուկրաինացի պատմաբանի որդի՝ Նա կրթություն է ստացել Կիևի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում, ապա պաշտոններ զբաղեցրել ռազմական ու ծովային գերատեսչություններում: Ռուս-ճապոնական պատերազմից հետո նվիրվել է գրականությանը, գրել է հիմնականում սիրային թեմաներով վեպեր, վիպակներ, պատմվածքներ՝ նմանակելով Չեխովին և իրեն համարելով կանանց հոգու «մասնագետ-հոգեբան»:

Նորահայտ վկայությունները ցույց են տալիս՝ հայկական միջավայրում քիչ հայտնի այս ռուս գրողը, սակայն, տասնամյակներ շարունակ կապված է եղել Հայաստանի ու Նրա մշակույթի հետ, որն էլ իր արտացոլումն է գտել Նրա գրական-հասարակական գործունեության մեջ: 1919-1920 թթ. Բ. Լազարևսկին Ռուսաստանի հարավային հայաշատ քաղաքներում, Թիֆլիսում ու Երևանում «Հայաստանի կանայք և աղջիկները» թեմայով դասախոսությունների շարք կարդալուց, մամուլում իր ստեղծագործություններից մի քանիսը տպագրելուց, Հովհ. Թումանյանի տանը հյուրընկալվելուց հետո՝ 1920 թ. կեսերին, ժամանում է Կ. Պոլիս՝ Փարիզ մեկնելու մտադրությամբ: Այստեղ Նա «Ճակատամարտ» թերթի հոկտեմբերյան համարներում արևմտահայերենով հրապարակում է «Հայաստանի կանայք և աղջիկները» խորագրով ակնարկ-ուսումնասիրությունը (գրողի մասին մանրամասն տե՛ս մեր «Բորիս Լազարևսկին Հայաստանի և հայ կանանց մասին», Երևան, 2004, 112 էջ աշխատությունը):

Ռուս գրողի «На чужбине» վերնագրով պատմվածքն առաջին անգամ տպագրվել է Թիֆլիսում լույս տեսնող «Կավկասկոյե սլովո» թերթի՝ 1919 թ. օգոստոսի 11-ի համարում: Այնուհետև, Հայ կինն կիսամյա հանդեսը 1920 թ. նոյեմբերի 1-ին (էջ 402-403) թարգմանաբար այն տպագրում է «Օտար երկրի մեջ (պատմվածք): Օր. Սիրանուշ Ապեանցի հիշատակին» խորագրով: Ստորև ընթերցողի ուշադրության ենք ներկայացնում Բ. Լազարևսկու այդ ուշագրավ պատմվածքը:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՋԱԲԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր
«Պատմաբանասիրական հանդես»-ի գլխավոր խմբագիր

ՕՏԱՐ ԵՐԿՐԻ ՄԵՋ

Օր. ՄԻՐԱՆՈՅԷ ԱՊԵԱՆՅԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Կարոտաբաղձ առանձնության մը զգացումն տարված՝ կ'երթայի Թիֆլիսի տաք փողոցներեն, քաջբեղով ինքզինքս գինովի մը պես, արևի ճառագայթներուն տակ, և կը մտածեի. «Ահա՛, հիմա, պիտի ընկճվիմ և պիտի մեռնիմ, օտար երկրի մեջ. հետո, պիտի փոխվիմ ոչինչի, կամ պիտի թռչիմ երկրի մը, ուր օտար երկիրը ոչ ոքի ծանոթ է, և ուր ամեն մարդ գիրար կը ճանչնա փոխադարձաբար, առանց բառ ըսելու, և ուր ամենուն համար հայրենիքն է...»:

Բնագոյներուն ամենն վատը, - ինքնապահպանության բնագոյը, - զիս մղեց դեպի սրճարան մը, որուն դրսերուսյթը զով ըլլալ կը խոստանար: Սիրուն մաժիտներ, թեթևաշարժ, կ'սպասարկեին. պառավ արկղակուհի մը, զգվող և հանդարտ աչքերով, դրամի ավելցուկը կու տար, ծխելով նուրբ սիգարեթը, և նոթագրելով բան մը քառակուսի թուղթի մը ծայրը:

Քանի մը անգլիացիներ ներս մտան և պաղարյուն կերպով տեղավորվեցան սեղանի մը առջև: Ցած ծայրով կը խոսեին գործի մը վրա: Պատուհանին մոտ, երկու վառ թխուհիներ, սպիտակ արդուզարդերով, իրենց պաղպաղակը կ'ըմբռնեին: Անոնցմե մին ավելի մեծ էր, իսկ մյուսը կ'երևեր հագիվ տասնվեց տարու, մթին և նվաղկուտ աչքերով, որոնց մեջ կը կարդացվեր թերևս թե ամա՛կ կրնար թռչիլ դեպի հոմ՝ ուր հայրենիքը ամենունն է...

Իմ մոտս միշտ եղած է ամեն բան գուշակելու կարողությունը...

Եվ հանկարծ, հիշեցի այն գրեթե նույնաման աչքերը, զորս տեսել էի քսան տարի առաջ, նախ՝ շոգեկառքի վագոնի մը մեջ, և հետո, հոս, այս միևնույն քաղաքին մեջ:

Այդ ատենները կրնայի տակավին կախարդվիլ այդ երկար թարթիչներով քաղցր աչքերուն պզտիկ մեկ ակնարկեն:

Մանկամարդուհին կը ճամփորդեր իր հորն ու մորը հետ առաջին կարգի վագոնով, և կարծես թե, ար-

տասահմանեն կուգար: Իրար ծանոթացանք, բայց շատ քիչ խոսեցանք, հակառակ անոր որ մեկտեղ ճամփորդեցինք օրերով: Միայն հաջողեցա հասկանալ, թե մանկամարդ աղջկան հայրենն անունը կը համապատասխաներ ռուսերեն «Սեր» բառին, թե ան նախորդ տարի ավարտած էր գիմնազիոնի ընթացքը, և թե կարդալ շատ կը սիրեր, հետո, կը տեսնվեր թե, ասոնք հարուստ մարդեր էին:

Գեղեցկություն, հարստություն և երիտասարդություն - երեք գործակալներ, ինչպես կը սիրեն արտահայտվիլ Պ. Պ. Մարքսիստները, որոնք անձնական երջանկությունը կ'ապահովեն: Բայց, ի մեջ այլոց, առաջին զգացումը, որ հայտնեցավ իմ մեջս, մանկամարդուհին ճանչնալեն հետո, եղավ այն տեսանք ընդ, հուսահատ, անարտահայտելի զգացումը, որով կը տոգորվի մարդ եկեղեցիէն դուրս ելած ատեն հոգեհանգստյան պատարագի մը ավարտելուն, եկեղեցական մեղեդիներու կատարյալ դարասացութենն մը հետո:

Մանկամարդ աղջկան անունը, - «Սեր»- ոչինչ չխոսեցավ ինձ ուրախության կամ երջանկության համար, և չեմ գիտեր ինչո՞ւ հիշեցի Գնոդ Զամբրնի ըսվածքը. «Սերը անբռնաբարելի կնիք մըն է, որ կը պահպանվի ամբողջ կյանքին մեջ, կը պահպանվի մինչև մահ, և կը պահպանվի մահեն իսկ վերջ»:

Սակայն, գրավելու համար իմ ճամփու ընկերուհիս, ջանացի պատմել զվարթ և ծիծաղելի բաներ, և կը հրճվեի իր ժպիտը տեսնելով:

Վագոնին պատուհանին առջևն էինք, և կը դիտեինք Էլպուրուսի տակավին վարդարակ կատարները, որոնք տակավին մարել կ'սկսեին:

Գիշերը, շոգեկառքը կանգ առավ մեծ կայարանի մը մոտիկը, ուր ժամանակ ունեցա զավաթ մը թեյ ատնելու, և գնելու Չեխովեն պզտիկ հատոր մը, պարունակող իր հոյակապ պատմվածքը «Գեղեցկությունները» («Գեղեցկուհիներ» - Ա. Ջ.):

Ճամփորդություննիս շարունակեցինք:

Փափագը ունեցա այդ գիրքը նվիրելու օրիորդին և արձանագրելու մեջը՝ որո՞ւ և որմե՞. այդպես էր, որ հասկացա իր անունը: Աչքերու համեստ շարժումով մը շնորհակալ եղավ ինձի: Դետո իրարմե բաժնվեցանք, հանգչելու համար մեր կիսաբաժնեներուն մեջ:

Հակառակ անոր որ պառներ էի, և աչքերս փակեր, չէի կրնար մոռնալ: Սերը արդեն իսկ ուղեղուս ներս թափանցած՝ հոգիս կը զրգռեր զիս: Միայն Զամբրնի խոսքերը միտքս կու գային, և միակ երանություն մը-անսովոր երանություն, -կը պաշարեր զիս. երջանիկ էի մտածելով, որ երբեք պիտի չխոսեի ա՛լ այդ աղջկան հետ, և երբեք իմ բարեկամուհիս պիտի չըլլար ան, և թե աշխարհիս մեջ, ոչինչով, ո՛չ մեկ սովորական բանով, իմ հիշատակս պիտի նսեմանար իր մեջ:

Բայց և այնպես, հաջորդ օրը նորեն տեսա իմ ճամփու ընկերուհիս, Թիֆլիսի փողոցներեն մեկուն մեջ, թեև ան չըմարեց զիս. և ես, ժամանակ չունեցա իմ թեքիս հանելու: Իրիկունը շարունակեցի ճամփորդությունս:

Այս դեպքը տեղի կ'ունենար շուրջ քսան տարի առաջ: Անկե ի վեր շատ երջանկություններ և դժբախտություններ անցան:

Կյանքիս ամենն լավ օրերը Պետրոգրադի մեջ սահեցան: Դոն շատ սերեր, նախանձ, և նույնիսկ հափշտակություն ունեցա, բայց երբեք չեղավ զգացում մը, նման անոր՝ որուն ենթարկվեցա այն ատենը, շոգեկառքի այդ վագոնին մեջ:

Պարզ դիպվածով մը իմացա, որ իմ նախկին ճամփու ընկերուհիս ալ ապրած էր Պետրոգրադի մեջ, ամուսնացած, բայց և արդեն մեռած էր:

Եվ քանի միտքս կ'իյնար թե՛ կրնայի զայն տեսնել, և չկրցա նշարել-այնքան անհավատալ կը թվեր իր մահը ինձի:

Կը խորհեի միայն:

Չէ՞ թե, վերջապես, Օրթանսիայի ծաղիկը չի կրնար փթիլ զինվորական համազգեստի նմանող երկինքի մը տակ:

Չէ՞ թե բիբերը, որոնց մեջ ցուլ Էլպուրուսի վարդարակ սարերը, չկրցան տոկալ երկար ատեն Ֆոնդանքայի ցեխոտ սառ երևույթին ...

Չէ՞ թե այդ մատղաշ հոգին, - կարող արդեն իսկ հասկնալու անթափանցելի Չեխովը - չկրցավ իմանալ այս տգեղ, տեղ-տեղ նյութականացած կյանքը, բոլորովին օտարական իր ծննդավայրին:

Կը կրկնեմ թե՛ չգարմացա, և նույնիսկ չտխրեցա: Որպես թե՛ ինձի ըսած ըլլային, թե՛ ուրիշ տեղ մը գացած էր ան, տեղ մը՝ ուր չկար երկրագունդի ֆիզիկական կյանքին կապված մեղ հասկացողությունը. բայց տակավին ինձի կը մնար կարողությունը փնտրելու, թե՛ ինչո՞ւ համար այդ տեղը ավելի հաճելի էր իրեն ...

Ասկե դուրս, այն պահուն, որ իր ֆիզիկական մահացումը կ'իմանայի, ինձի այնպես թվեցավ, թե ան զիս հիշած է, հիշած է նաև մեր վագոնի հանդիպումը:

Եվ այսօր, ի՞նքն է, ի՞նքն է, որ հատկապես այս սրճարանը դրկած է, իրեն այնքան նմանող այս անձը, հիշեցնելու համար ինձի երիտասարդությանս մեջ անցած այդ օրը:

Երբ մտածումներես սթափեցա, և ակնարկ մը նետեցի պատուհանին կողմը, ուր երկու կիններ քիչ մը առաջ նստեր էին սեղանի մը շուրջ, ոչ ոք տեսա հոմ:

Չեմ գիտեր ինչո՞ւ հարցուցի արկղակալուհիին, սրճարանին տիրոջ անունը և իբր պատասխան իմացա, թե այդ հաստատությունը կը կոչվեր «Սիրանուշ»:

Այս գուգադիպությունն ալ զիս չզրգռեց. նույնիսկ գուգադիպություն չթվեցավ ինձի, այլ ուրիշ բան մը, ուրիշ չեմ գիտեր ինչ անուն տալ ...

Փողոցը, տաքը միշտ ավելի հեղձուցիչ էր. տասնյակ մը քայլ առնելես վերջը վերստին եկա մաքրագործվիլ և կը մտածեի. «Ահա, թերևս հիմա պիտի ընկճվիմ և մեռնիմ»: Բայց այս անգամ բնագոյներու ամենն վատը չչարչրկեց զիս և չսպառնաց ինձի ...

ԱՐԳԵՆՏԻՆԱՀԱՅ ԳՐՈՂԻ ՆՈՐ ՎԵՊԸ

Արգենտինայի «Պենգվին» հրատարակչությունը լույս է ընծայել հայազգի արձակագրուհի Մագդա Թագթաշյանի «Ռոխավա» վեպը, որը համարվել է շաբաթվա հիսուն լավագույն գրքերից մեկը: Սա հեղինակի երրորդ գիրքն է, որտեղ նա շարունակում է գեղարվեստական գրականության միջոցով պատկերել Մերձավոր Արևելքի հակամարտությունները, այս անգամ՝ ներկա ժամանակաշրջանում: Գործողությունները կատարվում են սիրիական կամ Արևմտյան Քրդստանում (հայտնի որպես Ռոխավա): Վեպի գլխավոր հերոսուհին երիտասարդ հայուհի է, որը փնտրում է իր հորը և հայտնվում է քուրդ կին ազատամարտիկների միջավայրում:

Բուենոս Այրեսում ծնված գրող և լրագրող Մագդա Թագթաշյանը (Թախտաշյան) երրորդ սերնդի արգենտինահայ է: Նա քսան տարի աշխատել է «Կլարին» թերթում և «Խենտե ի պարա տի» ամսագրում: 2016-ին հրատարակել է «Չմոռանաք ինձ, Արմենուհի. իմ հայ տատիկի պատմությունը», իսկ 2020-ին՝ «Հայկական հոգին» վեպերը: 2018-ին Հարավային Ամերիկայի Հայկական ազգային խորհրդի կողմից արժանացել է Զրանտ Դինքի անվան մրցանակին՝ «մարդու իրավունքներին նվիրված իր գործունեության համար: Այսօր հեղինակն ակտիվ մասնակցություն ունի Արգենտինայի և միջազգային հայ համայնքում և համագործակցում է տարբեր լրատվամիջոցների ու գրական շրջանակների հետ:



(Սկիզբը նախորդ համարում)

1903-ից Նալբանդյանի դասարանում են իրենց ուսումնառությունը սկսել ամերիկյան ջութակահար, մանկավարժ, 20-րդ դարի խոշորագույն ջութակահարներից մեկը՝ Յաշա Խեյֆեցը լն։ Նալբանդյանի սաներից անհրաժեշտ է հիշատակել Ա.Պրանգին և Տ.Շվարցին, ովքեր կոմսերվատորիան ավարտեցին Ա. Ռուբինշտեյնի մրցանակով։ Նալբանդյանի սովետական շրջանի ուսանողներից հիշատակության են արժանի սովետական ջութակահար, մանկավարժ, ՌՍՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Իլյա Լուկաշևսկին, սովետական ջութակահար, մանկավարժ, Կիևի կոմսերվատորիայի պրոֆեսոր Յակով Մազագիները, Լեմինգրադի Ս. Մ. Կիրովի անվան թատրոնի նվագախմբի կոմցերտմայստեր Ե.Մ.Խանտան, Լենինգրադի ֆիլիարմոնիայի կոմցերտմայստեր Ի. Ա. Շախբերգը և այլք։

Ջութակահար մանկավարժի կյանքն ընդմիշտ կապվեց իր երկրորդ հայրենիքը դարձած Պետերբուրգի հետ, որտեղ ծավալեց իր ակտիվ համերգային և մանկավարժական գործունեությունը։ Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, ճիշտ երկու ամիս անց՝ 1941թ. օգոստոսի 22-ի գիշերը կոմսերվատորիայի կոլեկտիվն էվակուացվեց Տաշքենդ, որտեղ էլ ընդամենն ամիսներ անց՝ 1942թ. փետրվարի 23-ի երեկոյան, հարազատների, աշակերտների և ընկերների համար անսպասելի հանկարծամահ եղավ Նալբանդյանը 70 տարեկան հասակում։ Ինչն էր պատճառը՝ մնաց անհայտ։ Գուցե իր սիրելի Լենինգրադի համար մշտական տազմապը, անհանգստություններն ու ապրումները պատերազմի արհավիրքների դեմ մաքառող լենինգրադցիների համար։ Կամ էլ՝ հիասթափությունը ֆաշիստա-

րը լավ գիտեի, այլ ինձ համար բոլորովին նոր գործիք։ Համերգից հետո ես եղա նրա մոտ՝ արտիստական սեմյակում, մենք ծանոթացանք, և նա նշանակեց օր, որպեսզի ինձ լսի։ Նա շատ ուշադիր և սիրալիր էր իմ հանդեպ, ըստ երևույթին՝ իմ նվագը նրան շատ դուր եկավ, քանի որ իմ մասին տվեց փայլուն կարծիք»։

Սարասատեն գրեց. «Ես մեծ հաճույք ունեմ լսելու Լեոպոլդ Աուերի շատ հայտնի ուսանող Հովհաննես Ռոմանովիչ Նալբանդյանին, որը ջութակահարի մեծ տաղանդ ունի»։ Տեղեկանալով, որ Նալբանդյանն աշնանը պիտի վերադառնա Պետերբուրգ, Սարասատեն նրան խորհուրդ է տալիս մնալ արտասահմանում և համերգներով հանդես գալ։ «Սարասատեի այս խոսքերը հետագայում ես շատ անգամ եմ հիշել իմ կյանքում,- հետագայում կգրի Նալբանդյանը,- և շատ ափսոսում էի, որ չհետևեցի նրա խորհրդին»։

Հետագայում Նալբանդյանն առիթներ ունեցավ կրկին հանդիպելու Սարասատեի հետ՝ Ռուսաստանում նրա հյուրախաղերի ընթացքում։ Այդ հանդիպումների տպավորություններից ծնվեց Նալբանդյանի արժեքավոր հուշագրությունը Սարասատեի մասին, որն ավարտեց, ինչպես նշված է ծեռագրում՝ «2-4-41»։ Հ.Նալբանդյանի՝ Սարասատեի մասին հուշագրությունը, որը ջութակահարի գրական ժառանգության կարևոր մասն է, մեր ջանքերով հրատարակվեց 2019-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի «Արվեստագիտական հանդեսի» անդրամիկ համարում։ Իսկ օրերս՝ «Արվեստագիտական հանդեսի»՝ 2021թ. առաջին համարում առաջին անգամ լույս տեսավ հայ մեծ ջութակահարի հուշագրությունը հունգար նշանավոր ջութակահար, մանկավարժ, կոմպոզիտոր ու դիրիժոր Յոզեֆ Յոախիմի մասին, ով, ի

վել երաժշտությամբ։ Սպենդիարովի ստեղծագործություններն այն ժամանակ արդեն առանձնանում էին երաժշտականությամբ, նրբագեղությամբ և ազնվությամբ։ Հետագայում մենք նրա հետ շատ ընկերացանք, լինում էինք իրար մոտ և մեր ողջ ժամանակը նվիրում երաժշտությանը, շատ նվագում էինք, նա ինձ բազմիցս նվագակցում էր ռոյալի վրա՝ Սիմֆերոպոլում, Եվպատորիայում մեր համերգային ելույթների ժամանակ։ Այդ ժամանակ էլ նա ինձ համար գրեց ջութակի համար շատ գեղեցիկ ռոմանս, որը ես նվագում էի հափշտակվածությամբ։ Շատ ափսոս, որ այդ սիրուն ստեղծագործությունը հետագայում կորսվեց»։

Հենց Նալբանդյանն էլ Պետերբուրգում Սպենդիարյանին ծանոթացրեց ռուս ականավոր կոմպոզիտոր, կոմսերվատորիայի պրոֆեսոր Ն.Ա.Ռիմսկի-Կորսակովի հետ, որի ղեկավարությամբ Սպենդիարյանը շարունակեց կատարելագործվել կոմպոզիցիայի գծով։ Պետերբուրգ գալով՝ Սպենդիարյանն անմիջապես այցելում է Նալբանդյանին և խնդրում ամեն կերպ աջակցել իրեն՝ Ռիմսկի-Կորսակովի հետ տեսակցություն ունենալու։ Հետագայում Նալբանդյանը կհիշի. «Նա (Սպենդիարյանը - Ա.Ա.) ինձ մոտ եկավ առանց նախազգուշացման։ Հիշում եմ, սաստիկ հուզված էր։ Նա հարցրեց ինձ. «Ծանո՞ք ես, արդյոք, Ռիմսկի-Կորսակովին»։- Ինչպես կարող էի ծանոթ չլինել, երբ այն ժամանակ արդեն դասավանդում էի կոմսերվատորիայում։ - «Զե՞ս կարող, արդյոք, իմանալ... Աղաչում եմ քեզ, խոսի՛ր նրա հետ... Ուզում եմ մոտը սովորել»։

Ես Ռիմսկի-Կորսակովին հանդիպեցի հենց հաջորդ օրը կոմսերվատորիայում՝ երրորդ հարկում։ Սովորաբար Ռիմսկի-Կորսակովը, Լյադովը, Լավրովսկին և Գլազունովը

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ - 150

Հայ առաջին խոշոր ջութակահարը

կան Գերմանիայից. չէ՞ որ նրա նվագացանկի անբաժան մասն էին գերմանացի կոմպոզիտորների՝ Բախի, Բեթհովենի, Հենդելի, Շոպենի, Շումանի, Մենդելսոնի, Բրամսի, Մաքս Ռեգերի, Մաքս Բրուխի, Լյուդվիգ Շպորի, Յոզեֆ Ռաֆֆի ստեղծագործությունները։ 2է՞ որ նրա կատարողական արվեստի կարևոր էջերից մեկը 1911-ի և 1914-ի համերգային երկու շրջագայություններն էին Գերմանիայում, ելույթները Բեռլինում, Լայպցիգում, Դրեզդենում, Քյոլնում, Մայնի Ֆրանկֆուրտում, Դյուսելդորֆում, Բոնոնում և այլ քաղաքներում։ Փայլուն ելույթներ, որոնց ջերմ գրախոսականներով արձագանքեց գերմանական մամուլը։ Համերգներ, որոնց ակամատեսն էր գերմանացի ունկնդիրը։ 2է՞ որ հիշողությունից չէին կարող ջնջվել 20-րդ դարի սկզբի իր կիևյան համերգները՝ գերմանացի դիրիժոր Ռուդոլֆ Բուլլերիանի ղեկավարությամբ։ 2է՞ որ հենց Բեռլինում տեղի ունեցավ նրա ճակատագրական հանդիպումն աշխարհառջակ ջութակահար Յոզեֆ Յոախիմի հետ...

Ի՞նչ իմանալ Նալբանդյանը, որ ֆաշիստներն այրելու են Պավլովսկի կայարանի համերգային դահլիճը, որտեղ 1894-ի հունիսին՝ Պետերբուրգի կոմսերվատորիան ավարտելուց անմիջապես հետո, տեղի էր ունեցել իր դեբյուտը, և սիմֆոնիկ նվագախմբի հետ առաջին իսկ ելույթից հետո երկու ամիսների ընթացքում հաջողությունը հավատարմորեն ուղեկցել էր իրեն...

Ու դժվար, շատ դժվար էր համակերպվել այն մտքի հետ, որ գերմանացիներն այժմ ավերում ու ոչնչացնում են իր շատ սիրելի Լենինգրադը։ Այդպես էլ հեռացավ կյանքից Նալբանդյանը՝ չտեսնելով ազատագրված Լենինգրադը։

Եվ պատահական չէ, որ ջութակահարի մահից 20 տարի անց՝ 1962-ին, Երևանում լույս տեսած Գուրգեն Գևորգյանի «Հովհաննես Նալբանդյան» գրքույկը նվիրվեց հենց «Լենինգրադի կոմսերվատորիայի հիմնադրման 100-ամյակին»։

Հենց Լենինգրադում գրեց ջութակահարն իր արժեքավոր հուշագրությունն աշխարհառջակ ջութակահար Պաբլո դե Սարասատեի մասին։

Հովհաննես Նալբանդյանի գրական ժառանգությունը. հուշագրությունը Սարասատեի մասին


Խորհրդանշական էր բացառիկ վիրտուոզի դերը Հ.Նալբանդյանի կյանքում։ 1883-ին Նալբանդյանի մայրը բուժվելու նպատակով մեկնում է Խարկով։ Այնտեղից վերադառնալով՝ իր հետ բերում է Պաբլո դե Սարասատեի լուսանկարն ու հայտագիրը։ Որդու հարցին, թե ինչպես է նվագում Սարասատեն և արդյոք նրա նվագը մնա՞ն է Վենյամկուո նվագին, թե՞ նրա նվագում կա ինչ-որ արտասովոր, դիվային բան, ինչպես Պագանինիի նվագում, մայրը պատասխանում է. «Ո՛չ, նա չի նվագում Վենյամկուո նման։ Սարասատեի նվագի մեջ կան ինչ-որ երկնային, զարմանալիորեն գեղեցիկ, թեթև հնչյուններ, որոնք, ասես, հրեշտակային երգեցողություն լինեն։ Իսկ Սարասատեն նվագում է, ասես, ոչ թե ջութակ, այլ ինչ-որ անհայտ գործիք»։

Լ.Աուերի խորհրդով 1895թ. մայիսին երիտասարդ Նալբանդյանը մեկնում է Լոնդոն՝ այնտեղ համերգներով հանդես եկող Սարասատեին լսելու և նրան ներկայանալու նպատակով։ Լոնդոնում նա ներկա է գտնվում Սարասատեի համերգին։ «Հնչյունի ոչ երկրային զարմանալի գեղեցկություն, այնպիսի նրբագեղություն և այնպիսի տեխնիկական կատարելություն, ասես ես լսում էի ոչ թե ջութակ, ո-

ղեպ, Բեռլին ժամանած երիտասարդ Կոմիտասին խորհուրդ տվեց ընդունվել Ռիխարդ Շմիդտի մասնավոր կոմսերվատորիան։

Հովհաննես Նալբանդյանը և Ալեքսանդր Սպենդիարյանը

Բախտորոշ էր Նալբանդյանի դերը հայ մեծ կոմպոզիտոր, հայ սիմֆոնիկ երաժշտության հիմնադիր Ալեքսանդր Սպենդիարյանի ստեղծագործական ճակատագրում։ Լինելով հասակակիցներ և համաբաղաբացիներ՝ նրանք իրար ճանաչում էին հեռվից հեռու։ Երաժշտության շնորհիվ նրանք շուտով ծանոթանում են և մտերմանում։



«Սաշան ինձ մոտ եկավ ուսանողական համազգեստով,- տարիներ հետո պատմում էր Հովհաննես Ռոմանովիչը։- Նա ինձ անմիջապես դուր եկավ. ոսկեգույն հրաշալի մագեր, երկնագույն լավ աչքեր, նուրբ, ձվաձև դեմք։ Այն ժամանակ նա արդեն պենսնե էր կրում։ Ես Սիմֆերոպոլում հայտնի էի որպես ջութակահար։ Այդ տարիներին Պետերբուրգից գալիս էի և ելույթներ ունենում։ Հավանական է, այդ պատճառով էլ նա եկավ ինձ հետ ծանոթանալու։

Ներկայանալով նա մտեց դաշնամուրի մոտ և սկսեց հանդարտ, համապատաստից նվագել ու ինձ պատմել մոսկովյան երաժշտական կյանքից, այն մասին, որ ինքը ջութակի դասեր է առնում Պեկարսկուց։ Հետո նա մտեց ավելի հարմար և նվագեց իր ռոմանսները՝ երգելով ցածր, «կոմպոզիտորական» ձայնով։ Երբ վերջացրեց, ես նետվեցի դեպի նա, ամուր գրկեցի և ասացի, որ նա անպայման կոմպոզիտոր դառնա։ Իսկ նա համեստորեն հարցրեց. «Արժե՞, արդյոք» (տե՛ս Սպենդիարովա Մարինա, Սպենդիարով, Երևան, «Հայաստան», 1966, էջ 32)։

Անդրադառնալով իրենց հանդիպմանը՝ Նալբանդյանն իր «Ինքնակենսագրության» մեջ կխոստովանի, որ Սպենդիարյանի «ռոմանսներն ինձ շատ դուր եկան, և ես նրանցում զգացի տաղանդ ու համոզեցի նրան լրջորեն զբաղ-

ընդմիջումներին թելում էին կոմսերվատորիայի տեսուչ Աբրամիչիկի առանձնասենյակում։

Ես Նիկոլայ Անդրեևիչին հաղորդեցի Սաշայի խնդրանքը։ «Մի շատ շնորհալի պատանի է եկել,- ասացի ես։ - Նա շատ է ուզում, որ Դուք իրեն լսեք, շատ է ցանկանում Ձեզնից դասեր վերցնել»։ Ռիմսկի-Կորսակովն իմ խոսքերն ունկնդրեց բարյացակամորեն։ Նա նշանակեց ժամադրության օրն ու ժամը, և մենք գնացինք։ Հիշում եմ, ցերեկ էր։ Նիկոլայ Անդրեևիչը մեզ դիմավորեց նախասենյակում։ Պետք էր տեսնել Սաշայի դեմքը, երբ նա մոտեցավ նրան։ Որպիսի՜ հիացնումը։ Ես հիանում էի, որ նա այդպես զգայուն է» (տե՛ս Սպենդիարովա Մարինա, Սպենդիարով, էջ 59, 60)։

Հնորիվ Նալբանդյանի՝ իրականացավ Սպենդիարյանի երազանքը. 1896թ. ապրիլին նա իր աշխատանքները ներկայացրեց Ռիմսկի-Կորսակովին։

«Կոմպոզիտորը նրան (Սպենդիարյանին - Ա.Ա.) տարավ հյուրասենյակ, որտեղ սովորաբար պարապում էր աշակերտների հետ։ Սենյակում տարածված էր վերջերս նրան ընծայած դափնեպսակների և Նիկոլայ Անդրեևիչի սիրած ծաղկի՝ յասամանի բուրմունքը։ Դաշնամուրի վերևում, որի մոտ նրանք մտեցին, կախված էին Գլինկայի, Հայդնի և Բեթհովենի դիմանկարները...

Ռիմսկի-Կորսակովի՝ ալեխառն մորուքով, գունատ այտուկներով և ակնոցի ապակիների տակից հազիվ նշմարվող աչքերով դեմքը խիստ էր ու անթափանց։ Համբերությանը լսելով երիտասարդ Սպենդիարովի պոռթկուն խոսքերը՝ նա առաջարկեց ստեղծագործությունները թողնել՝ ծանոթանալու համար» (տե՛ս Սպենդիարովա Մարինա, Սպենդիարով, էջ 60)։ Պայմանավորվածության համաձայն՝ մայիսի 10-ին Սպենդիարյանը ստանում է կոմպոզիտորի պատասխանն առ այն, որ նա պետք է պարապի կոմպոզիցիայով, և համաձայն է լինել նրա ուսուցիչը։

Նալբանդյանը «հիացած էր Սպենդիարյանի ստեղծագործական տաղանդով և գտնում էր, որ ժամանակակից կոմպոզիտորներից դեռևս ոչ մեկին չի հաջողվել Արևելքը պատկերել այնպիսի հարազատությամբ, վառ գույներով ու կոլորիտով, ինչպես նրան։ Նալբանդյանը նկատի ուներ «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը և «Ղրիմի էսքիզներ» երկու սերիաները։ Սպենդիարյանը գրել և Նալբանդյանին է նվիրել «Կանցոնետտա», որը ջութակահարը սիրով նվագում էր իր համերգների ընթացքում։


Երկու հայրենակիցների բարեկամական ջերմ փոխհարաբերությունների թելը կտրեց Սպենդիարյանի անժամանակ մահը։

3. 4. Հավարտ շարադրանքիս պիտի ցավով նշեմ, որ այսօրվա մեր սերնդին անծանոթ է դրիմահայ երաժշտության այդ լեգենդար ներկայացուցիչը, նրա արվեստը. Սիմֆերոպոլում ծնված, Պետերբուրգում ապրած և իր մանկավարժական ու կատարողական արգասաբեր գործունեությունը ծավալած, աշխարհի տարբեր երկրներում համերգներով հանդես եկած ու իր արվեստով միշտ հարազատ ժողովրդին ծառայած հայտորդու գերեզմանն այսօր գտնվում է հեռավոր Տաշքենդում։ Եվ այսօր՝ նրա մահից 79 տարի անց, կա՞ն, արդյոք, նրա շիրմին այցելողներ ու թարմ ծաղիկներ դնողներ, նրան ու նրա արվեստը հիշողներ...

Աննա ԱՍՍՏՐՅԱՆ
Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

Արցախի պատմամշակութային կոթողները

Գանձասարի վանական համալիր



Գանձասարը 10-13-րդ դարերի վանական համալիր է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում՝ Մարտակերտի շրջանի Վանք գյուղի մոտակայքում: Իր անունն ստացել է Վանք գյուղի դիմաց գտնվող բլրի անունից, որի ընդերքում կան արծաթի և այլ մետաղների հանքեր:

Գանձասարի մասին առաջին տեղեկությունը հայտնել է Ամանիա Մոկացի կաթողիկոսը (10-րդ դ.): Արցախի իշխանաց իշխան Հասան-Ջալալի հովանավորությամբ 1216-1238 թթ.-ին կառուցվել է Գանձասարի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին և օծվել 1240-ի հուլիսի 22-ին: Գանձասարը 1400-1816 թթ. Աղվանից կաթողիկոսության նստավայրն էր: 18-րդ դ. սկզբին կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի շուրջն են համախմբվել Ղարաբաղի ու Սյունիքի ազատագրական շարժման ղեկավար գործիչները: Գանձասարը պահպանեց ազատագրական շարժման կենտրոնի դերը մինչև 1815-ը:

Գանձասարի վանական համալիրը շրջապատված է բարձր պատերով և ներառում է Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին: Որոշ արվեստաբաններ գտնում են, որ վանքը կարելի է դասել հայկական ճարտարապետության զուգորդողների շարքում: Անատոլի Յակոբսոնը (խորհրդային նշանավոր միջնադարագետ-հնագետ) Գանձասարը նկարագրել է այսպես. «Ճարտարապետական արվեստի մարգարիտ... Սա միջնադարյան ճարտարապետության ու քանդակագործության եզակի կոթող է, որն իսկապես պետք է համարվի 13-րդ դարի հայկական մշակութային հանրագիտարան»:

Գանձասարի պատերին առկա են բազմաթիվ հայերեն արձանագրություններ: Դրանք հետազոտողների ու շաղկապների կենտրոնում են հայտնվել դեռևս 19-րդ դարից: Հատկանշական է, որ Հովսեփ Օրբելին 1909 թ. հաշվեց ավելի քան 84 արձանագրություն, որոնցից մեկում ներկայացվում է եկեղեցու կառուցման պատմությունը:

Գանձասարը ներկայումս Արցախի հոգևոր կենտրոններից մեկն է:

Ինչո՞ւ են լուում այլմոլորակայինները

Մի իմաստուն ասել է. «Կյանքում ամենագլխավորը մարդկային հաղորդակցման շրջությունն է»: Սակայն, ամենայն հավանականությամբ, կան բազմաթիվ վերերկրային քաղաքակրթություններ, որոնք մեզ հետ հաղորդակցվելու դույզն իսկ մտադրություն չունեն, կամ դա ցանկալի չէ նրանց: Ու չնայած բազմաթիվ փորձերին՝ մարդկությանն առայժմ չի հաջողվում կապ հաստատել արտերկրային քաղաքակրթությունների հետ:

Տիեզերքի լուծությունը գիտության համար ամենամալուծելի և ամենավիրավորական հանելուկներից մեկն է:

Արտերկրային քաղաքակրթությունների գիտական որոնումների հիմնադիր Ֆրենսիս Դեյվը գտնում էր, որ տիեզերքում գոյություն ունեն առնվազն 200 բարձր զարգացման մակարդակի քաղաքակրթություններ: Այսօր նրա հետմորդները և աշակերտներն այդ թիվը հասցրել են 10 հազարի և ավելի: Սակայն արդեն 30 տարի տևող որոնումներն ու փնտրտուքը ոչինչ չեն տվել, տիեզերքից ոչ մի արձագանք, տիեզերքը լուում է:

SETI ծրագրին (արտերկրային բանականության որոնում) այսօր միացած է երկրագնդի ամենաընդգրկուն ցանցը: Գիտական կենտրոններ և անհատներ կարող են ցանկացած պահի տեղեկություն ստանալ և մշակել մոլորակի ամենախոշոր ռադիոաստղադիտակի (Արեսիբո, Պուերտո Ռիկո) տվյալները: Արեսիբոյի ռադիոաստղադիտակն ի վիճակի չէ մարտելու տեղեկատվության ամբողջ զանգվածը, և մոլորակի 5 միլիոն համակարգիչ կամավոր լծված են այդ գործին: Սակայն անցած վեց տարվա ընթացքում՝ ոչ մի հուսադրող տվյալ:

Մոլորակի ամենահզոր աստղադիտակները երկար ժամանակ դիտարկում էին (կյանքի գոյության համար նպաստավոր) Թայու Կիտա Եփսիլոն, Էրիդանա Հորկուլես համաստեղությունները, սակայն ոչ մի արդյունք:

Առապելական Օգ երկրի պատվին հղացվեց ՕՅՍԱ նախագիծը՝ նույնպես զրոյական արդյունք: Ամերիկյան ՆԱՍԱ-ն

ծեռնարկել է 110 միլիարդ դոլար արժողությամբ «Կիկլոպ» նախագիծը, միմյանցից 15 կմ հեռավորության վրա տեղադրված հազարավոր ռադիոաստղադիտակներ կարող են տիեզերքից ազդանշաններ ընդունել հազար լուսնային տարվա շրջանագծով և բանականության գոյությունն ստուգել ավելի քան մեկ միլիոն աստղերի վրա՝ սկսած ամենամոտիկից՝ Ալֆա Կենտավորայից:

Չկայացած հաղորդակցման փուլերը

1600 թ. - Հռոմում՝ Շաղիկների հրապարակում, խարույկ հանվեց վանական Ջորդանո Բրունոն, որը գտնում էր, թե տիեզերքում կան բազմաթիվ բնակեցված աշխարհներ:

1662 թ. - Եվպատորիայի տիեզերական հեռավոր կապի կենտրոնից տիեզերք ուղարկվեց «Խաղաղություն, Լեմին, ԽՍՀՄ» ռադիոազդանշանը:

1974 թ. - Արեսիբո (Պուերտո Ռիկո) ռադիոաստղադիտակից տիեզերք ուղարկվեց կողավորված ռադիոազդանշան:

1977 թ. - արձակվեցին ամերիկյան «Վոյաջեր-1», «Վոյաջեր-2» սարքերը՝ ուսկյա ծայնապնակներով, մեկ միլիարդ տարվա ռետուրով: Ծայնապնակի վրա ծայներիզված է 1000 մեղեդի:

1999 թ. - սկսվեց SETI (Արտերկրային բանականության որոնում) ծրագիրը:

2006 թ. - ամերիկյան ՆԱՍԱ-ն տիեզերք ուղարկեց SIM աստղադիտակը:

2015 թ. - կարծակվեց ՆԱՍԱ-ի «Կեպլեր» աստղադիտակները, որոնք կոչված են որոնելու կյանքի համար պիտանի մոլորակներ:

Չորս պատճառ, որոնք հիմնավորում են այլմոլորակայինների լուծությունը

Պրոգրայի վարկած

Երկրից ուղարկված ռադիոազդանշանն ամենամոտ աստղին կարող է հասնել տասնյակ հազարավոր տարիների ընթացքում, և անհամբերություն ցուցաբերել վաղաժամ է: Բացի այդ, միայն

Ամարասի վանք

Ամարասի վանական համալիրը գտնվում է Արցախի Հանրապետության Մարտունու շրջանում: Վանքը հիմնել է Գրիգոր Լուսավորիչը 4-րդ դարի սկզբին (ըստ հայ պատմիչ Փավստոս Բուզանդի), իսկ նրա կառուցումը նաև կապված է Արցախի թեմի առաջին եպիսկոպոս Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսի անվան հետ, ով էլ թաղված է եկեղեցու արևելյան կողմում: Նրա շիրիմի վրա կառուցվել է ներգետնյա դամբարան: Հայկական գրերի հեղինակ Մեսրոպ Մաշտոցը 5-րդ դարում Ամարասի վանքում հիմնում է Արցախի 1-ին դպրոցը: Միաժամանակ եկեղեցուն կից կառուցվում են 36 բազմաբնույթ շենքեր:

Ամարասի վանքի մասին վկայություններ են թողել բազմաթիվ հայ պատմիչներ՝ Մովսես Կաղանկատվացի, Ստեփանոս Օրբելյան և այլք:

Վանական համալիրը տարբեր ժամանակահատվածներում օգտագործվել է տարբեր նպատակներով. ծառայել է որպես ամրոց, մաքսատուն, ապա նաև 19-րդ դարում վերականգնվել է և 1992-ից կրկին ծառայում է որպես եկեղեցի: Այն Արցախի հայկական ճարտարապետական վաղ շրջանի կոթողներից մեկն է:

մեկ՝ Կաթնծիրի համաստեղությունում հաշվված է 200 միլիարդ աստղ: Խնդիրն անհավանականորեն ավելի բարդ է, քան խոտի դեզում ասել փնտրելը: Այս համապարփակ խնդրի լուծումը կախված է միկրոէլեկտրոնիկայի և ռադիոաստղադիտակների զարգացումից:

Ամենամոայլ վարկածը

Աշխարհի վերջի մասին հիպոթեզը հանգում է նրան, որ տեխնոլոգիական ցանկացած քաղաքակրթություն դատապարտված է կործանման իր իսկ ձեռքով:

«Կենդանաբանական այգու» հիպոթեզը

Բայց չէ՞ որ աղետից հետո (թեկուզ հաշված թվով) պետք է, որ ոմանք փրկվեին: Կենդանաբանական այգու հիպոթեզն այն է, որ այլմոլորակայինների կողմից Երկիր մոլորակը հայտարարված է արգելոց, և փորձի մաքրության նկատառումով նրա բնակիչների հետ հաղորդակցվելն արգելված է:

Մի քիչ շոյող վարկածը հանգում է նրան, որ մենք մեր բանական եղբայրներ համարվող այլմոլորակայինների համար անգիտակից մանուկներ ենք լուկ, և հաղորդակցվելն իրենց հետ հեշտ բան չէ:

Ավստրալիական աստղագետների վերջին հաշվարկները ցույց են տվել, որ Երկիր մոլորակը մոտ 2 միլիարդ տարով երիտասարդ է ուրիշ արեգակնային համակարգությունների նմանատիպ մոլորակներից: Այնպես որ մեր շտապողական հույսերը տիեզերքում հարազատներ գտնելու հարցում նման են նախադրոցականների օր առաջ մեծանալու երազանքներին:

Եվ այնուամենայնիվ

Կալիֆոռնիայի SEIT ինստիտուտի առաջատար աստղագետ Սեթ Շոստակը կանխատեսում է, որ համապատասխան բնագավառների բուռն առաջընթացը կհանգեցնի նրան, որ առաջիկա 20 տարվա ընթացքում մարդկությունը մեր համաստեղության սահմաններում անպայման կհայտնաբերի բանական կյանք: Մի պայմանով սակայն, եթե մեր մոլորակից դուրս տիեզերքի որևէ այլ վայրում հիրավի գոյություն ունի այդ բանական կյանքը:

«Ի24ԵՍԻԱ»

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնը հայտարարում է ընտրություն Մոլեկուլի կառույցի ուսումնասիրության կենտրոնի Ռեկտոնի հետազոտությունների և մասս-սպեկտրոմետրիայի և Օպտիկական սպեկտրոսկոպիայի լաբորատորիաների վարիչների թափուր տեղերի համար

Համաձայն «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա գիտական կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տիպային (օրինակելի) կանոնադրության 16-րդ կետի՝ թեկնածություն առաջարկելու իրավունք ունեն համապատասխան բաժանմունքի թյուրոն, գիտական կոլեկտիվը և կազմակերպության գիտական գործունեությանը համապատասխանող մասնագիտությամբ ՀՀ ԳԱԱ անդամները:

Առաջադրված թեկնածուի համար կազմակերպության մասնագիտական ուղղվածությանը համապատասխան գիտական աստիճանի առկայությունը պարտադիր է:

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- Դիմում
- Լուսանկար

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ամբիոնների վարիչների թափուր տեղերի ընտրության մասին ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը հայտարարում է մրցույթ «Դեղագործական քիմիա» ամբիոնի վարիչի թափուր տեղի համար

Համաձայն «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ամբիոնների ձևավորման, գործունեության և ամբիոնների վարիչների ընտրության կանոնակար-

3. Քաղվածք աշխատանքային գրքույկից

4. Ինքնակենսագրություն

5. Բարձրագույն կրթության, գիտական աստիճանի և գիտական կոչման դիպլոմների պատճենները

6. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ

7. Գիտական աշխատությունների ցուցակ

8. Բնութագիր աշխատավայրից: Թեկնածուի հիմնավորված առաջադրումը վերոնշյալ փաստաթղթերի հետ միասին 15 օրվա ընթացքում (հայտարարության հրապարակման օրվանից) ներկայացնել ՀՀ ԳԱԱ կադրերի բաժին, հետևյալ հասցեով: 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24, հեռ. 52-70-51:

ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն

գի»՝ մրցույթին կարող են մասնակցել գիտությունների դոկտորի կամ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ **Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14, 077 31 63 76
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 19.10.2021 թ.:

"ГИТУТИОН" ("Найка") газета НАН РА